Բանկի Խորհրդի թիվ 01/24-04 Լորոշում

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 20**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ և ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

2. ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՄԱՐՈՒՄ 5

2.1 ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ և ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 5

2.2 ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ 10

2.3 ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ, ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋ և ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄ 13

3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 14

3.1 ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 14
3.2 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎ 15
33 ՈՍԿՅԱ ԻՐԵՐԻ ԳՐԱՎ 15
34. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎ 15

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 16

5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ 17

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 17

1. Սահմանումներ եվ հապավումներ

1.1 Ընդհանուր սահմանումներ և հապավումներ

«Բանկ»՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ,

«Վարկառու»՝ Բանկի հետ վարկային պայմանագիր կնքած կամ այդպիսի պայմանագիր կնքելու համար Բանկ դիմած անձ,

«Գրավատու»՝ ի ապահովումն Վարկային պայմանագրից բխող Վարկառուի պարտավորությունների կատարման գրավի պայմանագիր կնքած կամ այդպիսի պայմանագիր կնքելու համար Բանկ դիմած անձ,

«***Երաշխավոր»***՝ ի ապահովումն Վարկային պայմանագրից բխող Վարկառուի պարտավորությունների կատարման երաշխավորության պայմանագիր կնքած կամ այդպիսի պայմանագիր կնքելու համար Բանկ դիմած անձ,

«Կողմեր»՝ վարկային պայմանագրի դեպքում՝ վարկային պայմանագրի կողմերը, գրավի պայմանագրի դեպքում՝ գրավի պայմանագրի կողմերը, Երաշխավորության պայմանագրի դեպքում՝ երաշխավորության պայմանագրի կողմերը,

«Վարկային պայմանագիր»՝ Բանկի և Վարկառուի միջև սույն կանոններով սահմանված կարգով կնքված պայմանագիր,

«Գրավի պայմանագիր»՝ Բանկի և Գրավատուի միջև սույն կանոններով սահմանված կարգով կնքված պայմանագիր,

«Երաշխավորության պայմանագիր»՝ Բանկի և Երաշխավորի միջև սույն կանոններով սահմանված կարգով կնքված պայմանագիր,

«Ապահովման միջոցի պայմանագիր»՝ Գրավի և Երաշխավորության պայմանագրերը միասին,

«Պայմանագիր»՝ Վարկային, Գրավի, Երաշխավորության, պայմանագրերը միասին,

«Ապահովում տրամադրած անձ»՝ Գրավատու և/կամ Երաշխավոր,

«Գրավի առարկա»՝ Պայմանագրով ապահովում հանդիսացող գույք,

«Վարկավորման պայմաններ»՝ Բանկի կողմից հաստատված՝ վարկերի տրամադրման էական պայմաններ և (կամ) պայմանների փաթեթներ: Պայմանագիր կնքվելու դեպքում համապատասխան վարկատեսակի Վարկավորման պայմանները հանդիսանում են կնքված Պայմանագրի անբաժանելի մաս:

«Առաջարկ-դիմում»՝ Պայմանագիր կնքելու համար Վարկառուի, Երաշխավորի և/կամ Գրավատուի կողմից ներկայացված՝ վարկային, երաշխավորության, գրավի կամ վարկային և ոսկյա իրերի գրավի խառը պայմանագիր կնքելու վերաբերյալ դիմում, որը Բանկի կողմից ակցեպտավորվելով, Բանկի և դիմումը ներկայացված անձի միջև կնքվում է համապատասխան պայմանագիրը,

«Վարկ»՝ Վարկառուի կողմից առաջարկ-դիմումով նախընտրած վարկատեսակի Վարկավորման պայմաններին համապատասխան տրամադրվող վարկ,

«Վարկային հաշիվ»՝ Վարկառուին վարկի տրամադրման և հաշվառման նպատակով Բանկի կողմից Վարկառուի անունով բացվող հաշիվ (ոչ բանկային հաշիվ) կամ հաշիվների խումբ,

«Մարման արտոնյալ ժամանակահատված»՝ Վարկավորման պայմաններով նախատեսված ժամանակահատված, որի ընթացքում վարկի և/կամ տոկոսագումարների մարում չի իրականացվում,

«Սպառողական վարկ»՝ Սպառողական վարկ համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի:

«Հեռակառավարման համակարգ» կամ « **Համակարգ**»՝ ARDSHININVESTBANK I-BANKING համակարգ, որի միջոցով, էլեկտրոնային փաստաթղթերի և/կամ հատուկ տեխնիկական միջոցների (սերտիֆիկատներ, բանալիներ և այլն) կիրառմամբ Բանկը Վարկառուին և/կամ Ապահովում տրամադրած անձին մատուցում է առանձին բանկային ծառայություններ:

«Անձնական տվյալների մշակման և ԱԲՌԱ համաձայնություն»՝ Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի կողմից տրվող համաձայնություն առ այն, որ Բանկը մշակի իր անձնական տվյալները ներքոնշյալ պայմաններով.

1.1 Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն) իր անձնական տվյալները, այն է՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի ինքնությունը համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Բանկի հետ պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու,

Բանկի կողմից անցկացվող ակցիաների (առաջարկների), այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

1.1.1 Սույն կետի ուժով Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին և վերջինիս լիազորում է Բանկին տրամադրել իր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել.

1. վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս (սույն կետը պարտադիր պայման է վարկային հայտ ներկայացնելիս),
2. մոնիթորինգ իրականացնելիս,
3. այլ ծառայություններ առաջարկելիս:

Ինչպես նաև տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի հետ պայմանագիր կնքելու դեպքում տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի, առանց Վարկառուին և/կամ Ապահովում տրամադրած անձին նախապես տեղյակ պահելու, «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն Բանկին տրամադրի իր ապագայում առաջացող ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը սույնով տեղեկացվում է, որ վարկային հարցումների քանակը կարող է բացասական ազդեցություն ունենալ վարկային ամփոփ գնահատականի վրա: Եթե հարցումը կատարվում է մոնիթորինգի շրջանակներում, ապա այն բացասական ազդեցություն չի ունենում:

Սույն կետի ուժով Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը լիազորում է Բանկին իրեն վերաբերելի ցանկացած տեղեկություն, որը հասանելի է դարձել Բանկին, ներառյալ իր անձնական տվյալները, տրամադրել այլ կազմակերպություններին և Բանկի գործակալներին, այդ թվում՝ վարկային բյուրոներին, ապահովագրական ընկերություններին կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին, տեղեկատվական ընկերություններին (այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ»-ին), նշված տեղեկությունները ստուգելու, վարկային պատմությունը պարզելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ապահովվածություն ստանալու համար: Միաժամանակ Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը լիազորում է Բանկին այլ ընկերություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև իր աշխատանքային վայրից ստանալ իր անձնական տվյալները և Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի վերաբերյալ այլ տեղեկություններ:

Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը հավաստում է, որ գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

1.1.2 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի կողմից տրված, և Բանկը ստանում է Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի անձնական տվյալները մշակելու իրավունք՝ Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին/անհատներին տրամադրելու նպատակով, պայմանով, որ դա անհրաժեշտ է Բանկին համապատասխան ծառայությունը մատուցելու և/կամ Բանկի համար աշխատանքներ կատարելու և/կամ գույք ձեռքբերելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

1.1.3 Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի կողմից անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում՝ Բանկը պարտավորվում է դադարեցնել անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման

կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:

2. Վարկի տրամադրում, սպասարկում եվ մարում

2.1 Վարկի տրամադրում, վարկային պայմանագրի կնքում և սպասարկում

2.1.1 Բանկից վարկ ստանալու նպատակով Վարկառուն Բանկին ներկայացնում է առաջարկ-դիմում, որը Բանկի կողմից ընդունվելու (ակցեպտավորվելու) դեպքում Վարկային պայմանագիրը համարվում է կնքված: Բանկը Վարկառուի առաջարկ-դիմումը ակցեպտավորում է Վարկի տրամադրմամբ: Սույն կետով սահմանված կարգով կնքված Վարկային պայմանագիրը ներառում է Վարկառուի ներկայացրած առաջարկ-դիմումը, սույն կանոնները և համապատասխան վարկատեսակի Վարկավորման պայմանները, իսկ նախատեսված լինելու դեպքում նաև այլ փաստաթղթեր:

Վարկառուն ընդունում է, որ Համակարգը հնարավորություն է ընձեռում վարկ ստանալու նպատակով Բանկին դիմել նաև առցանց հարթակում, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով հեռահար եղանակով ստորագրել և Բանկ ներկայացնել Պայմանագիր կնքելու Առաջարկ-դիմումներ, կնքված Պայմանագրերում փոփոխություն կատարելու Առաջարկ-դիմումներ, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր (այդ թվում՝ տեղեկություններ, տեղեկանքներ, համաձայնություններ, թույլտվություններ և այլն), ստանալ Բանկի դիրքորոշումը Պայմանագիր կնքելու, Պայմանագրում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումներն ակցեպտավորելու կամ մերժելու վերաբերյալ:

Վարկառուն գիտակցում և ընդունում է, որ Համակարգի միջոցով վարկ ստանալու նպատակով համապատասխան էջում ստորագրման ենթակա դաշտերում հավաստող նշում դնելով և/կամ համապատասխան հավաստման կոճակը սեղմելով, ամբողջությամբ համաձայնում է համապատասխան էջում, հղումում և/կամ փաստաթղթում զետեղված պայմանների, տեղեկությունների և այլ դրույթների հետ, ինչը Վարկառուի համար առաջացնում է համապատասխան իրավունքներ, պարտավորություններ և այլ իրավական հետևանքներ, և ունի նույն իրավական նշանակությունը, ինչ ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:

2.1.2 Վարկի տրամադրման դեպքում՝ Բանկը Վարկառուի առաջարկ-դիմումում նշած էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին ուղարկում է Վարկի տրամադրման վերաբերյալ ծանուցում և(կամ) ծանուցումը տրամադրում է առձեռն՝ Բանկի տարածքում: Համակարգի միջոցով Վարկի տրամադրման դեպքում Վարկառուի կողմից ներկայացված առաջարկ-դիմումի, կնքված Պայմանագրերում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումի, Վարկի հաստատման վերաբերյալ ծանուցման, Վարկի պայմանների փոփոխության հաստատման ծանուցման, Վարկի էական պայմանների անհատական թերթիկի էլեկտրոնային տարբերակներն ուղարկվում են Վարկառուի առաջարկ-դիմումում նշած էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ մարման ժամանակացույցը հասանելի է Համակարգի համապատասխան էջում:

2.1.3Վարկի տրամադրումն արտացոլվում է Վարկառուի վարկային հաշվին: Վարկի տրամադրման ամսաթիվ է հանդիսանում Վարկառուի վարկային հաշվին դրա արտացոլման ամսաթիվը, որը հանդիսանում է Վարկի օգտագործման ժամկետի սկիզբ: Վարկի ստացումը հավաստվում է վարկային հաշվից դրամարկղի ելքի օրդերով կամ անկանխիկ վարկերի դեպքում՝ բանկային հաշվից տրված քաղվածքով:

2.1.4 Բանկը Վարկը տրամադրում է Վարկառուի, իսկ կիրառության դեպքում, Ապահովում տրամադրած անձի՝ իր ներքին իրավական ակտերով սահմանված վարկունակության գնահատման համակարգերի արդյունքներով:

2.1.5 Վարկային պայմանագրով Բանկը Վարկառուին տրամադրում է Վարկ, իսկ Վարկառուն պարտավորվում է Վարկային պայմանագրով սահմանված պայմաններով վերադարձնել Վարկը և տոկոսներ վճարել դրա դիմաց, վճարել Վարկավորման պայմաններով սահմանված այլ վճարումները և կատարել կնքվող պայմանագրերից բխող այլ պարտավորությունները:

2.1.6 Վարկի օգտագործման համար տոկոսների հաշվարկումը (կուտակումը) իրականացվում է յուրաքանչյուր օր՝ սկսած Վարկի տրամադրման օրվանից: Բաժանարարը՝ անուիտետային վարկերի դեպքում՝ 365 օր, ոչ անուիտետային վարկերի դեպքում՝ ըստ տարվա օրերի քանակի՝ 365 կամ 366:

2.1.7 Եթե Պայմանագրում նշված ժամկետները համընկնում են հանգստյան և(կամ) ոչ աշխատանքային օրերին, ապա այդ ժամկետների ավարտման օր է համարվում Բանկի համար հաջորդ աշխատանքային օրը, որի ընթացքում Վարկառուն պարտավոր է պատշաճ կատարել Վարկային պայմանագրով Բանկի հանդեպ ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ: Պայմանագրով սահմանված մարման և/կամ վճարման օրը ոչ աշխատանքային օրվան համընկնելիս մարման և/կամ վճարման օրը տեղափոխվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Մարման վերջնաժամկետը սույն կետին համապատասխան հաջորդ աշխատանքային օր տեղափոխվելու դեպքում տոկոսագումարները և պայմանագրից բխող այլ վճարները հաշվարկվում են մինչև վճարումը կատարելու օրը ներառյալ:

2.1.8 Պայմանագրից բխող վճարների (դրանց մի մասի), այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ Վարկի գումարի, տոկոսագումարի, այլ վճարների, վճարման կարգը մարման ժամանակացույցով սահմանված լինելու դեպքում, այն հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

2.1.9 Վարկի և տոկոսագումարների մարման ժամանակացույցով սահմանված վճարները (դրանց մի մասը) Պայմանագրով սահմանված, այդ թվում՝ Բանկի և Վարկառուի միջև աշխատանքային հարաբերությունների դադարման դեպքերում, Բանկի կողմից միակողմանի փոփոխվելու պարագայում Բանկը գրավոր ծանուցում է Վարկառուին՝ կցելով փոփոխված մարման ժամանակացույցը և Վարկառուն անվերապահորեն պարտավորվում է համապատասխան վճարները կատարել համաձայն փոփոխված մարման ժամանակացույցի: Փոփոխված մարման ժամանակացույցը Վարկառուին ուղարկման պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.1.10 **Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավունք ունի՝**

2.1.10.1 Պայմանագրերից բխող վճարումների կատարման օրերին համապատասխան (իսկ այդպիսի օր կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ ցանկացած պահի դրությամբ) և/կամ դրանից հետո կամ Պայմանագրերի խախտմամբ պարտքեր ձևավորելու դեպքում անակցեպտ կարգով՝ առանց Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի լրացուցիչ հանձնարարության, Բանկի կողմից սահմանված ժամկետներում գանձել պարտքի գումարները Հաճախորդի և/կամ Ապահովում տրամադրած անձի Բանկում գտնվող հաշիվներից:

2.1.10.2 Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի՝ Բանկում սպասարկվող հաշիվներին գումարներ մուտքագրելու դեպքում՝ առանց Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի լրացուցիչ հանձնարարության համապատասխան գումարներն ուղղել Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի Պայմանագրից բխող պարտավորությունների մարմանը:

2.1.10.3 Միակողմանիորեն, առանց լրացուցիչ փաստաթուղթ կազմելու, Վարկառուին և Ապահովում տրամադրած անձանց ծանուցելով, փոփոխել (մեծացնել կամ նվազեցնել) Վարկի Տոկոսադրույքը և Վարկի այլ պայմանները, այդ թվում, բայց ոչ բացառապես,

ա. Սպառողական վարկերի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի փոփոխման դեպքում: Տոկոսադրույքի փոփոխության չափը պայմանավորող չափանիշներն են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի նվազագույնը 2 տոկոսային կետով փոփոխումը (բարձրացումը կամ իջեցումը) կամ Հայաստանի Հանրապետության դրամի նվազագույնը 10% արժեզրկումը կամ արժևորումը: Տոկոսադրույքի փոփոխության չափը հաշվարկվում է փոփոխությունից հետո մարման (վերադարձման) ենթակա Վարկի նկատմամբ: Տոկոսադրույքի կամ դրա հիմքում ընկած գործոնի մեծության մասին Վարկառուն կարող է տեղեկանալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային www.cba.am կայքէջից:

բ. Վերաֆինանսավորվող վարկերի դեպքում՝ Վերաֆինանսավորող ընկերության կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքը փոփոխվելու դեպքում,

գ. Եթե Վարկը տրամադրվել է Վարկառուի գործատուի հետ համագործակցության շրջանակներում՝ Վարկառուի գործատուի և Բանկի միջև համագործակցության պայմանները փոփոխվելու կամ համագործակցությունը դադարեցվելու դեպքում,

դ. Եթե Վարկը տրամադրվել է Վարկառուի գործատուի հետ համագործակցության շրջանակներում՝ Վարկառուի և Բանկի հետ համագործակցող գործատուի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը դադարելու դեպքում,

ե. Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

2.1.10.4 Միակողմանիորեն տրամադրել կամ ավելացնել Արտոնյալ մարման ժամանակահատված,

2.1.10.5 Միակողմանիորեն արտոնյալ պայմաններով տրամադրված վարկերի (այդ թվում՝ աշխատավարձային նախագծերի և այլ՝ արտոնյալ սակագների կիրառում նախատեսող Բանկի հետ համագործակցության առկայության) դեպքում, արտոնությունների տրամադրման նախապայմանի դադարեցման պահից վարկավորման պայմանները համապատասխանեցնել ոչ արտոնյալ պայմաններով վարկավորման պայմաններին կամ այլ արտոնյալ սակագներին (բավարար հիմքերի առկայության դեպքում):

2.1.10.6 Վարկառուից և/կամ Ապահովում տրամադրած անձանցից պահանջել փաստաթղթեր, այդ թվում բայց ոչ միայն, վարկունակության և վարկարժանության գնահատման համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, Վարկերը ֆինանսավորող և վերաֆինանսավորող անձանց տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և այլն,

2.1.10.7 Վարկային և/կամ Ապահովման միջոցի պայմանագրի հիման վրա իրեն պատկանող իրավունքը (պահանջը) առանց Վարկառուի և/կամ Ապահովում տված անձի համաձայնության գործարքով փոխանցել (զիջել) այլ անձի, այդ թվում «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող ընկերությունը, եթե վարկը վերաֆինանսավորվում է վերջինիս կողմից,

2.1.10.8 Վարկառուից պահանջել Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող հանձնարարականներ, երաշխիքներ, գրավ, և Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարում,

2.1.10.9 Իր բացառիկ հայեցողությամբ գնահատել Վարկի նպատակային օգտագործումը,

2.1.10.10 Պայմանագրից բխող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները և Վարկառուին և Ապահովում տրամադրած անձանց վերաբերող այլ ցանկացած տեղեկատվություն և փաստաթուղթ բացահայտել՝

ա. Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարման ապահովում տրամադրած երրորդ անձին (անձանց)՝ գրավատու(ներ)ին, երաշխավոր(ներ)ին և այլն,

բ. Բանկին ֆինանսավորող կամ վերաֆինանսավորող կազմակերպություններին և վերջիններիս կողմից նշված անձանց,

գ. Պայմանագրի հիման վրա Բանկին պատկանող իրավունքը (պահանջը) այլ անձի փոխանցելիս (զիջելիս) այդ իրավունքը ձեռք բերող անձին,

դ. քրեական հետապնդման մարմիններին, եթե նման բացահայտումն անհրաժեշտ է Բանկի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար,

ե. դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարմիններին՝ կատարողական թերթի կատարման, ինչպես նաև ապահովման միջոցների հաշվին Պայմանագրով իր պահանջների առաջնահերթ բավարարում ստանալու համար,

զ. պետական լիազոր մարմիններին (այդ թվում օտարերկրյա պետական լիազոր մարմիններին) և/կամ վերջինների կողմից նշված անձանց, եթե դա իրականացվում է Վարկառուի՝ օրենքով (այդ թվում օտարերկրյա օրենդսդրությամբ) ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու, պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու, այդ պարտավորությունների ցանկացած փոփոխությունը բացահայտելու նպատակով և դրա շրջանակներում,

2.1.10.11 Իրականացնել մոնիթորինգ՝ Վարկառուի վարկունակության աստիճանը պարզելու նպատակով,

2.1.10.12 *Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու օրը կամ Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո 90 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 90-րդ օրը, իսկ տվալ օրը ոչ աշխատանքային լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը Վարկի գումարի մնացորդի շրջանակներում երկարաձգել Պայմանագրի գործողությունը երկարաձգման պահին գործող պայմաններով, Պայմանագրում նշված ժամկետով, իսկ երկարաձգման պահին Բանկում գործող պայմանների համաձայն Պայմանագրում նշված ժամկետով երկարաձգման հնարավորության բացակայության դեպքում երկարաձգման պահին գործող պայմաններով սահմանված առավելագույն ժամկետով՝ երկարաձգման պահին երկարաձգման համար Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարը Բանկին վճարվելու կամ Վարկառուի հաշվին նշված միջնորդավճարի չափով անհրաժեշտ գումարի առկայության դեպքում, և նշվածի վերաբերյալ Վարկառուն Բանկին տալիս է իր հաշվից առանց լրացուցիչ հանձնարարականի և/կամ համաձայնության միջնորդավճարի գումարի գանձման անվերապահ համաձայնությունը: Ընդ որում՝ Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո 90 օրվա ընթացքում Բանկի կողմից սույն կետով նշված իրավունքի իրացման դեպքում Պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված դրա գործողության ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:

Երկարաձգման պայմանը չի գործում այն դեպքում, երբ մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը կամ գործողության ժամկետը լրանալուց հետո 90 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 90-րդ օրը, իսկ տվյալ օրը ոչ աշխատանքային լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը Պայմանագրով

սահմանված կարգով Վարկառուն ամբողջությամբ կատարում է վարկային պարտավորությունները, ինչպես նաև այն դեպքում, երբ ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում ժամկետանց օրերի քանակը գերազանցում է 90 օրը: Երկարաձգման պայմանը չի գործում նաև այն դեպքում, երբ մինչև երկարաձգումը Վարկառուն չի մարում Պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվեգրված (ներառյալ մինչև վարկի ժամկետի ավարտը հաշվեգրվելիք) ժամկետային և/կամ ժամկետանց տոկոսագումարները, տուժանքը:

Տոկոսադրույքի փոփոխման դեպքում նոր տոկոսադրույքն ուժի մեջ է մտնում և նոր տոկոսադրույքով հաշվարկը սկսվում է Պայմանագրի ժամկետի երկարաձգման օրվանից: Ընդ որում, սույն կետով սահմանված Պայմանագրի ժամկետի երկարաձգման Բանկի իրավունքի իրացման դեպքում Վարկառուն համարվում է Պայմանագրի պայմանի միակողմանի փոփոխության վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցված, ինչի վերաբերյալ Վարկառուի համաձայնությունը համարվում է տրված, և Վարկառուն հրաժարվում է հետագայում այդ հանգամանքը վիճարկելու իրավունքից: Պայմանագրի ժամկետի երկարաձգման պահից Պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը սույն կետի ուժով համարվում է կնքված:

Սույն կետով սահմանված կարգով Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվելու դեպքում Բանկը Վարկառուի՝ իրեն հայտնի վերջին հեռախոսահամարին sms հաղորդագրության ուղարկման կամ հեռախոսազանգի միջոցով ծանուցում է Վարկառուին Պայմանագրի վերջնաժամկետի, Վարկի և տոկոսագումարների մարումների օրերի և չափերի, ինչպես նաև փոփոխվող այլ պայմանների մասին: Սույն կետով սահմանված ծանուցումը ստանալու պահից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Վարկառուն իրավունք ունի հրաժարվել սույն կետով սահմանված կարգով իրականացված Պայմանագրի երկարաձգումից (վաղաժամկետ լուծել Պայմանագիրը)՝ տվյալ օրվա դրությամբ Պայմանագրի գծով առկա պարտքի ամբողջ գումարը վճարելու պայմանով, որի դեպքում Վարկառուին վերադարձվում է սույն կետի հիման վրա երկարաձգման համար գանձված միջնորդավճարը:

Ոսկյա իրերի գրավի և վարկային խառը պայմանագրի ժամկետի երկարաձգման պահին Բանկում գործող պայմաններով ապահովագրությամբ վարկատեսակի բացակայության դեպքում պայմանագրով սահմանված ապահովագրության իրականացումը դադարեցվում է (սույն պարբերությունը կիրառելի է միայն Ոսկյա իրերի գրավի և վարկային խառը պայմանագրով ապահովագրության իրականացում նախատեսված լինելու դեպքում):

սույն կետը վերաբերելի է և գործում է միայն Ոսկյա իրերի գրավի և վարկային պայմանագրի շրջանակներում

2.1.10.13 Պայմանագրով ապահովագրության իրականացում նախատեսված լինելու դեպքում միակողմանիորեն փոփոխել Պայմանագրով սահմանված ապահովագրության պայմանները, այդ թվում՝ դադարեցնել ապահովագրության իրականացումը:

2.1.10.14 Ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել Վարկ տրամադրելուց և (կամ) ներկայացնել վարկային պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջ:

2.1.10.15 Իրականացնել Վարկային և (կամ) Ապահովման միջոցի պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ:

2.1.11 Պայմանագրի գործողության ընթացքում Վարկառուն պարտավորվում է՝

2.1.11.1 Վարկային պայմանագրին համապատասխան և նշված ժամկետներում վերադարձնել Վարկը և վճարել տոկոսները և վարկավորման պայմաններով սահմանված միջնորդավճարներն ու վճարման ենթակա այլ գումարները,

2.1.11.2 Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու դեպքում Բանկի պահանջով վերջինիս վճարել Վարկավորման պայմանագրով նախատեսված տուժանքը (տույժ և տուգանք) և դրամական պարտավորությունների խախտման համար տոկոսները,

2.1.11.3 Վարկն օգտագործել բացառապես Վարկային պայմանագրով սահմանված նպատակներով,

2.1.11.4 աջակցել Բանկի լիազորված (ներգրավված) և Բանկի կողմից նշված անձանց՝ նրանց կողմից ընտրված ժամկետներում Վարկառուի մոտ մոնիտորինգի անխոչընդոտ և արդյունավետ իրականացմանը,

2.1.11.5 Պայմանագրով սահմանված վճարների չափերը Պայմանագրի պայմաններին համապատասխան փոփոխվելու դեպքում համապատասխան վճարները կատարել համաձայն փոփոխված պայմանների: Վարկառուին մարման ժամանակացույց տրամադրված լինելու դեպքում՝ Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը գիտակցում են, որ Պայմանագրով սահմանված վճարների չափերի փոփոխությունների արդյունքում փոփոխված պայմանների և իրենց մինչև փոփոխությունների կատարումը տրամադրված ժամանակացույցի միջև կարող են առաջանալ հակասություններ, և ընդունում են, որ նման հակասությունների դեպքում կգործեն սահմանված կարգով փոփոխված պայմանները: Ընդ որում, Բանկը

Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի պահանջով վերջիններիս կտրամադրի փոփոխված պայմաններին համապատասխանող մարման ժամանակացույց:

2.1.11.6 Ոչ սպառողական նպատակներով տրամադրվող վարկերի դեպքում՝

2.1.11.6.1 պահպանել շրջակա միջավայրի պահպանության պահանջները, ինչպես նաև ապահովել իր գործունեության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ արգելված գործունեության բացառումը, զերծ մնալ փոքրահասակներին անթույլատրելի աշխատանքների ներգրավելուց և պահպանել Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ սահմանվող սոցիալական և այլ պահանջները,

2.1.11.6.2 առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության երրորդ անձանց առջև չստանձնել որևէ դրամական պարտավորություն (վարկ, փոխառություն, երաշխիք, երաշխավորություն և այլն). չվերակազմակերպվել, ինչպես նաև չնվազեցնել կանոնադրական կապիտալը,

2.1.11.6.3 բացահայտել պարտավորությունների մարման աղբյուրները, ինչպես նաև Բանկի պահանջով ողջամիտ ժամկետում վերջինիս տրամադրել իր պայմանագրային պարտավորությունների կատարման՝ ներառյալ պատշաճ կատարման հնարավորության նկատմամբ հսկողություն իրականացնելու և Վարկի տրամադրման հանգամանքների էական փոփոխությունների բացահայտման համար բոլոր անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը՝ ներառյալ իր հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվություններն ու տեղեկությունները, աջակցել Բանկի կողմից մոնիտորինգի իրականացմանը՝ ապահովելով վերաբերելի տեղեկատվությամբ,

2.1.11.6.4 Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը ապահովել Բանկի համար ընդունելի ապահովման միջոցներով, իսկ վերջինների արժեզրկման կամ արժեզրկման վտանգ առաջանալու դեպքում Բանկի պահանջով նրա օգտին ձևակերպել լրացուցիչ համարժեք ապահովման միջոցներ,

2.1.11.6.5 անմիջապես տեղեկացնել Բանկին Վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների ցանկացած խախտման, ինչպես նաև հանգամանքների էական փոփոխությունների մասին,

2.1.11.6.6 առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեռք չբերել որևէ այլ կազմակերպության ակտիվների 50 տոկոսից ավելին,

2.1.11.6.7 առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության չվաճառել, չփոխանցել, կամ այլ կերպ չօտարել իր ակտիվների 50 տոկոսից ավելին (անկախ նրանից, դա կատարվում է մեկ գործարքի, թե՝ փոխկապակցված կամ չփոխկապակցված մի շարք գործարքների միջոցով),

2.1.11.6.8 առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության որևէ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում չկատարել Վարկառուի սեփական կապիտալի 20 տոկոսը գերազանցող ներդրում,

2.1.11.7 Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները վաղաժամկետ կատարելու մասին գրավոր պահանջն ստանալուց հետո սահմանված կարգով և ժամկետում վաղաժամկետ ու ամբողջությամբ կատարել պարտավորությունները,

2.1.11.8 Իրականացնել Վարկային պայմանագրով սահմանված այլ պարտավորությունները:

2.1.11.9 Բոլոր այն դեպքերում, երբ Բանկի կողմից Պայմանագրին համապատասխան միակողմանիորեն փոփոխվում է որևէ պայման, իսկ Վարկառուն համաձայն չէ փոփոխված պայմանին, վերջինս իրավունք ունի վաղաժամկետ մարել (վերադարձնել) Վարկը, սպառողական վարկի դեպքում՝ առանց տուգանքների:

2.1.11.10 Արտարժութային Վարկերի շրջանակներում փոխարկում իրականացվելու դեպքում Բանկը կիրառվում է Բանկի կողմից համապատասխան արժույթի համար սահմանված առքի և վաճառքի կամ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքները:

2.1.11.11 Վարկառուն և Ապահովում տրամադրած անձինք իրավունք չունեն Պայմանագրերով պարտքը կամ դրա մի մասն այլ անձի փոխանցելու առանց Բանկի գրավոր համաձայնության:

2.1.12 Պայմանագրի գործողության ընթացքում Վարկառուն իրավունք ունի՝

2.1.12.1 *Մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը կամ ժամկետը լրանալու օրը կամ Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո 90 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 90-րդ օրը, իսկ տվյալ օրը ոչ աշխատանքային լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը Բանկի համար ընդունելի կապի միջոցով դիմել Բանկին Վարկի գումարի մնացորդի շրջանակներում Պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման նպատակով: Ընդ որում՝ Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո 90 օրվա ընթացքում սույն կետով նշված իրավունքի իրացման արդյունքում Պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում Պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված դրա գործողության ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:

Երկարաձգման պայմանը չի գործում այն դեպքում, երբ մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Պայմանագրով սահմանված կարգով Վարկառուն ամբողջությամբ կատարում է վարկային պարտավորությունները, ինչպես նաև այն դեպքում, երբ ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում ժամկետանց օրերի քանակը գերազանցում է 90 (իննսուն) օրը: Երկարաձգման պայմանը չի գործում նաև այն դեպքում, երբ մինչև երկարաձգումը Վարկառուն չի մարում Պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվեգրված (ներառյալ մինչև վարկի ժամկետի ավարտը հաշվեգրվելիք) ժամկետային և/կամ ժամկետանց տոկոսագումարները, տուժանքը:

Պայմանագրի գործողության երկարաձգումն իրականացվում է երկարաձգման պահին գործող պայմաններով, այդ թվում՝ պայմաններով սահմանված ժամկետով, երկարաձգման նպատակով Բանկին դիմելու պահին Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարը Բանկին վճարվելու կամ Վարկառուի հաշվին երկարաձգման համար նշված միջնորդավճարի չափով անհրաժեշտ գումարի առկայության դեպքում, և նշվածի վերաբերյալ Վարկառուն Բանկին տալիս է իր հաշվից առանց լրացուցիչ հանձնարարականի և/կամ համաձայնության միջնորդավճարի գումարի գանձման անվերապահ համաձայնությունը:

Տոկոսադրույքի փոփոխման դեպքում նոր տոկոսադրույքն ուժի մեջ է մտնում և նոր տոկոսադրույքով հաշվարկը սկսվում է Վարկառուի դիմումի հիման վրա Բանկի կողմից պայմանագրի ժամկետի երկարաձգման օրվանից:

Վարկառուն գիտակցում և ընդունում է, որ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով Պայմանագրի ժամկետը երկարաձգելու նպատակով Բանկին դիմելու դեպքում համապատասխան էջում ստորագրման ենթակա դաշտերում հավաստող նշում դնելով և/կամ համապատասխան հավաստման կոճակը սեղմելով ամբողջությամբ համաձայնում է համապատասխան էջում, հղումում և/կամ փաստաթղթում զետեղված պայմանների, տեղեկությունների և այլ դրույթների, այդ թվում՝ Պայմանագրի վերջնաժամկետի և Վարկի և տոկոսագումարների մարման ժամանակացույցի հետ, դրանք ճշգրիտ են և արժանահավատ, բխում են Վարկառուի կամքից և ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ունեն լիարժեք իրավական ուժ, Վարկառուի համար առաջացնում են համապատասխան իրավունքներ, պարտականություններ և այլ իրավական հետևանքներ:

Վարկառուի դիմումի հիման վրա Բանկի կողմից Պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման պահից Պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը սույն կետի ուժով համարվում է կնքված, իսկ փոփոխված մարման ժամանակացույցը՝ Վարկառուին ծանուցված:

***սույն կետը վերաբերելի է և գործում է միայն Ոսկյա իրերի գրավի և վարկային պայմանագրի շրջանակներում:**

2.2 Վարկի մարումները, տոկոսագումարների և սպասարկման վճարների վճարումներ

2.2.10 Վարկը և տոկոսագումարները Վարկառուի կողմից մարվում (վերադարձվում) են Վարկային պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

2.2.11 Վարկային պայմանագրից բխող վճարումները պետք է իրականացվեն Վարկառուի անվամբ բացված բանկային հաշվին կամ Բանկի դրամարկղ կամ վճարային տերմինալների միջոցով վարկային հաշվին մուտք անելու միջոցով:

2.2.12 ԱԳՄ-ի (բանկոմատի), վճարային տերմինալների և քարտային կամ բանկային փոխանցումների միջոցով մուծումներ (վճարումներ) կատարելու դեպքում Վարկառուն գիտակցում է, որ գործարքի հաշվանցումը կարող է իրականացվել որոշակի ժամանակ անց, ինչը կարող է հանգեցնել Վարկառուի Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման (Վարկառուն կարող է ունենալ ժամկետանց պարտավորություններ) և իր վրա է վերցնում դրա հետևանքով բոլոր բացասական հետևանքների ռիսկը:

2.2.13 Վարկառուի բանկային հաշիվներին արգելանքների առկայության դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում մուտքագրված գումարները պարտավորությունների մարմանը չուղղվելու և պարտավորությունների ժամկետանցվելու համար, և նշվածի հետ կապված բոլոր ռիսկերը կրում է Վարկառուն:

2.2.14 Վարկառուին սպասարկող բանկի կամ միջնորդ բանկերի կողմից Վարկի կամ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարների ուշ փոխանցումը հիմք չի հանդիսանում Վարկառուին Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար պատասխանատվությունից ազատելու համար:

2.2.15 Վարկառուի կողմից Վարկը և/կամ տոկոսագումարը Վարկային պայմանագրով նախատեսված, ինչպես նաև Բանկի ծանուցման մեջ նշված ժամկետներին չվերադարձվելու դեպքում չվճարված Վարկը և/կամ տոկոսագումարը համապատասխանաբար համարվում են ժամկետանց: Վարկի ժամկետանցման դեպքում՝ Վարկային պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը (կուտակումը) դադարում է, և այդ օրվանից մինչև Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական ու լրիվ կատարումը վերադարձման ենթակա Վարկի ժամկետանց մասի նկատմամբ հաշվարկվում (կուտակվում) են տոկոսներ՝

Վարկավորման պայմաններով նախատեսված տոկոսների չափով, իսկ տոկոսագումարի ժամկետանցման դեպքում՝ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ հաշվարկվում է Վարկավորման պայմաններով սահմանված տույժը, եթե վարկավորման պայմաններով պատասխանատվության այլ միջոցներ սահմանված չեն:

2.2.16 Վարկային պայմանագիրը համարվում է Վարկառուի կողմից խախտված, եթե Վարկը (դրա համապատասխան մասը) և/կամ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները և/կամ Վարկավորման պայմաններով սահմանված այլ վճարումները չեն մարվում (վճարվում) Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներին ու պայմաններին համապատասխան, կամ առկա են սույն Վարկավորման կանոնների 2.3.1 կետում նշված հիմքերից որևէ մեկը, կամ Վարկն ամբողջությամբ վաղաժամկետ Վարկառուի կողմից չի մարվել (վերադարձվել) դրա վերաբերյալ Բանկի ծանուցումն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

2.2.17 Տոկոսի և տուժանքի հաշվեգրման համար հիմք է ընդունվում անուիտետային վարկերի դեպքում՝ 365 օր, ոչ անուիտետային վարկերի դեպքում՝ ըստ տարվա օրերի քանակի՝ 365 կամ 366 օր:

2.2.18 Վարկային պայմանագրով Վարկառուի վճարման պարտականությունները կարող են կատարվել երրորդ անձանց կողմից: Սույնով Վարկառուն թույլատրում է Վարկը մարող երրորդ անձանց տրամադրել Վարկի մարման համար անհրաժեշտ տեղեկատվություն, իսկ վարկի մարումից հետո՝ վարկի մնացորդի և/կամ երրորդ անձի կողմից կատարված մարման վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն:

2.2.19 Վարկառուի կողմից Վարկային պայմանագրով Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու դեպքում Բանկի կողմից պատասխանատվության միջոցներ (տուժանք կամ Վարկառուի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոց) չի կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան վարկատեսակի Վարկավորման պայմաններով:

2.2.20 Վարկային պայմանագրով նախատեսված դրամական պարտավորությունները լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում Վարկառուի պարտավորությունները մարվում են հետևյալ հերթականությամբ.

Պայմանագրի շրջանակներում ձևավորված Բանկի նկատմամբ Վարկառուի դեբիտորական պարտավորությունների դիմաց հաշվարկված տույժերը,

Պայմանագրի շրջանակներում ձևավորված Բանկի նկատմամբ Վարկառուի դեբիտորական պարտավորությունները,

Վարկավորման պայմաններով նախատեսված միջնորդավճարները, սպասարկման վճարներ, Պայմանագրով նախատեսված վճարման ենթակա այլ վճարներ,

ժամկետանց տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումարը,

ժամկետանց Վարկի վրա հաշվարկված (կուտակված) տոկոսագումարը,

հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց տոկոսագումարը,

ժամկետանց Վարկի գումարը,

Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) ժամկետային տոկոսագումարը,

Վարկի գումարը:

Դրամական պարտավորությունների կատարման հերթականությունը կարող է փոխվել Բանկի հայեցողությամբ՝ առանց Վարկառուին տեղեկացնելու: Վարկառուն պարտավորվում է սույն կետով սահմանվածի կապակցությամբ որևէ պահանջ և(կամ) առարկություն Բանկին չներկայացնել:

2.2.21Պայմանագրով նախատեսված դրամական պարտավորությունները Վարկառուի ցանկությամբ վաղաժամկետ մարվելու դեպքում մարումներն իրականացվում են Վարկառուի կողմից առաջարկած հերթականությամբ:

2.2.22 Սուբսիսավորում

2.2.13.1 Կոնկրետ վարկատեսակի վարկավորման պայմաններով նախատեսված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության հատուկ վարկային ծրագրի (այսուհետ՝ Հատուկ վարկային ծրագրիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության անունից իրականացնում է Վարկի տոկոսների մարմանն ուղղված գումարի սուբսիդավորում՝ վարկավորման պայմաններով սահմանված չափերով (այսուհետ՝ Սուբսիդավորման գումար):

2.2.13.2 Սուբսիդարման գործընթացը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անունից կազմակերպում է «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

2.2.13.3 Սուբսիդավորումը իրականացվում է Հատուկ վարկային ծրագրի շրջանակներում Սուբսիդավորման գումարի օգտագործման կարգավորման նպատակով Ընկերության և Բանկի միջև կնքված պայմանագրին (այսուհետ՝ Սուբսիդավորման պայմանագիր) և Վարկերի տոկոսագումարների սուբսիդավորման գործընթացն իրականացնելու նպատակով Ընկերության և Հայաստանի Հանրապետության

ֆինանսների նախարարության միջև 2013 թվականի ապրիլի 5-ին կնքված փոխըմբռնման հուշագրի անբաժանելի մասը կազմող «Տոկոսների սուբսիդավորման կարգ»-ին (այսուհետ՝ Տոկոսների սուբսիդավորման կարգ) համապատասխան:

2.2.13.4 Վարկառուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր ամսվա հերթական վճարումը (Վարկի տվյալ ամսում մարման ենթակա գումար և Սուբսիդավորման գումարի հաշվին չֆինանսավորվող տոկոսներ) կատարելուց հետո Բանկը Վարկառուին հասանելիք տվյալ ամսվա Սուբսիդավորման գումարն ուղղում է վարկի գծով այդ ամսվա տոկոսագումարի վճարմանը:

2.2.13.5 Վարկառուին հասանելիք տվյալ ամսվա Սուբսիդավորման գումարի չափը հաշվարկվում է համաձայն Տոկոսների սուբսիդավորման կարգի:

2.2.13.6 Սուբիդավորման ենթակա տոկոսագումարի չափը հաշվարկվում է Վարկի գումարի նվազող մնացորդի նկատմամբ:

2.2.13.7 Տույժերը և տուգանքները սուբսիդավորման ենթական չեն:

2.2.13.8 Սուբսիդավորման գումարը չի տրամադրվում, եթե Բանկի կողմից Ընկերությանը տոկոսների սուբսիդավորման հայտի ներկայացման օրվա դրությամբ տվյալ վարկի գծով առկա են ժամկետանց պարտավորություններ:

2.2.13.9 Եթե Վարկառուն վարկային պայմանագրով նախատեսված հերթական (ամսական) վճարումը կատարում է սահմանված ժամկետից շուտ, ապա Բանկը Վարկառուին հասանելիք տվյալ ամսվա Սուբսիդավորման գումարը ուղղում է Վարկի գծով այդ ամսվա տոկոսագումարի վճարմանը Վարկային պայմանագրով նախատեսված հերթական (տվյալ ամսվա) վճարման օրը:

2.2.13.10 Եթե Վարկառուն վարկային պայմանագրով նախատեսված հերթական (ամսական) վճարումը կատարում է սահմանված ժամկետից ուշ, ապա Բանկը Վարկառուին հասանելիք տվյալ ամսվա Սուբսիդավորման գումարը ուղղում է Վարկի գծով այդ ամսվա տոկոսագումարի վճարմանը Վարկառուի կողմից կատարված փաստացի վճարման օրը:

2.2.13.11 Վարկառուի կողմից Վարկի ամբողջ գումարը վաղաժամկետ մարելու (վերադարձնելու) կամ սույն պայմանների նախատեսված դեպքերում սուբսիդավորումից զրկվելու դեպքում Բանկը Տոկոսների սուբիսդավորման կարգի համաձայն հետ է փոխանցում Սուբսիդավորման գումարները ՀՀ ֆինանսական նախարարությանը:

2.2.13.12 Սուբսիդավորման գումարի տրամադրումը վաղաժամկետ դադարեցվում է հետևյալ հիմքերով՝

1) Վարկառուի դիմումի համաձայն, որի մասին Բանկը երկու բանկային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Ընկերությանը.
2) Վարկային պայմանագրի վաղաժամկետ լուծման (դադարման) դեպքում, որի մասին Բանկը երկու բանկային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Ընկերությանը.
3) Վարկային պայմանագրի գործողության ընթացքում ի հայտ են եկել ներկայացված տեղեկությունների կեղծիքներ, Վարկն օգտագործվել է ոչ նպատակային և(կամ) այն այլևս չի հանդիսանում Հատուկ վարկային ծրագրի պահանջներին և Ընկերության ներքին կարգերով սահմանված պահանջներին(չափանիշներին) բավարարող և վերջինիս կողմից իր միջոցներով վերաֆինանսավորված վարկ.
4) Վարկառուի կողմից Վարկի գծով իր պարտավորությունները պարբերաբար (երեք հերթական վճարում) չկատարելու դեպքում:

2.2.13.13 Սույն պայմանների 2.2.13.12-րդ կետում նշված հիմքերի բացահայտման դեպքում Բանկը Վարկառուին հասանելիք Սուբսիդավորման գումարի մնացորդը հետ է փոխանցում ՀՀ ֆինանսների նախարարությանը:

2.2.13.14 Բանկն իրավունք ունի Հատուկ վարկային ծրագրի շրջանակներում սուբսիդավորում ստացած Վարկառուների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել Ընկերությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրելու համար:

2.2.13.15 Վարկավորման պայմաններին համապատասխան սուբսիդավորմամբ Տոկոսադրույքի դեպքում տոկոսը վերանայվում (փոփոխվում) է, եթե՝

ա) Վարկն օգտագործվել է ոչ նպատակային, ապա տոկոսը սահմանվում է ՀՀ
կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով.

բ) Ընկերությունը չի վերաֆինանսավորում Վարկը, ապա տոկոսը սահմանվում է ՀՀ
կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,

գ) Տոկոսի սուբսիդավորումը Ընկերության կողմից մերժվում կամ դադարեցվում է, ապա տոկոսը սահմանվում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով:

Սույն կետում նշված հանգամանքների վրա հասնելու ուժով տոկոսը համարվում է վերանայված (փոփոխված) սույն կետում նշված կարգով և ժամկետներում: Փոփոխված տոկոսի չափի մասին Բանկը ծանուցում է Վարկառուին և ապահովում տրամադրած անձանց, և վերջիններիս անվերապահորեն պարտավորվում պարտավորությունները կատարել փոփոխված տոկոսադրույքին համապատասխան:

Սույն կետում նշված փոփոխված տոկոսով տոկոսագումարների հաշվարկումը (կուտակումը) սկսվում է հանգամանքներն Բանկի համար ի հայտ գալուն հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրվանից, որի վերաբերյալ Բանկը ծանուցում է Վարկառուին և ապահովում տրամադրած անձանց՝ ծանուցումը ուղարկելով Վարկառուի և ապահովում տրամադրած անձանց՝ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին և(կամ) փոստի և/ կամ SMS հաղորդագրության միջոցով՝ համապատասխան փոփոխությունը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 7-րդ աշխատաքային օրը ներառյալ:

2.3 Վարկի տրամադրման մերժում, վարկային պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջ և տոկոսադրույքի միակողմանի փոփոխում

2.3.1 Բանկն իր հայեցողությամբ կարող է, Վարկառուին նախապես տեղեկացնելով, պահանջել պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում (այդ թվում, բայց ոչ միայն, տոկոսները, տուժանքը (տույժ և տուգանք), մերժել վարկի տրամադրումը, ինչպես նաև, միակողմանիորեն փոփոխել Վարկի տոկոսադրույքը, եթե՝

2.3.1.1. Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը չի կատարել կամ անպատշաճ է կատարել Վարկային պայմանագրից և/կամ Ապահովման միջոցի պայմանագրից բխող պարտավորությունները, ներառյալ, բայց չսահմանափակելով սահմանված ժամկետում չի վերադարձնում Վարկի գումարը և(կամ) չի վճարում Տոկոսները, սպասարկման վճարները, տուժանքը և(կամ) այդ կետանցները/ուշացումները կրում են պարբերական բնույթ, կամ Բանկի ծանուցման պահանջները կամ օրենքով սահմանված ցանկացած այլ պարտավորություն, կամ

2.3.1.2. Առկա է որևէ դատական կամ իրավական այլ գործընթացը կամ իրադրության այլ փոփոխությունը հիմք է տալիս կասկածելու, որ Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը ի վիճակի կլինի ժամանակին վճարել Բանկին ունեցած պարտքերը, կամ

2.3.1.3. Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի ակտիվները կամ դրանց մի զգալի մասը անհատույց կամ իր համար էականորեն ոչ շահավետ պայմաններով փոխանցվել են կամ հնարավոր է, որ կփոխանցվեն երրորդ անձանց, կամ

2.3.1.4. Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի ակտիվների (գույքի) կամ դրանց մի զգալի մասի վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել կամ հնարավոր է, որ կդրվի, կամ

2.3.1.5. դատարանը Վարկառուին և/կամ Ապահովում տրամադրած անձին ճանաչել է սնանկ (անվճարունակ) կամ նրա նկատմամբ սկսվել է սնանկության վարույթ, կամ

2.3.1.6. Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը կետանցված պարտավորություններ ունի Բանկի, այլ ֆինանսական հաստատությունների (այլ բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և այլն), պետական կամ համայնքային բյուջեների հանդեպ, կամ

2.3.1.7. Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի ֆինանսական վիճակը վատթարացել է կամ առկա են նման միտումներ, կամ առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտորեն վկայում են, որ Վարկը սահմանված ժամկետում չի վերադարձվի (այդ թվում՝ սնանկության նախադրյալներ), կամ

2.3.1.8. Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի դեմ հարուցվել են քաղաքացիական, քրեական կամ վարչական գործեր, վարչական և այլ վարույթներ, կամ

2.3.1.9. Հայտնաբերվել է, որ Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը Բանկին տրամադրել է խեղաթյուր, կեղծ, շինծու, մոլորեցնող կամ անարժանահավատ տեղեկություններ կամ փաստաթղթեր, կամ թաքցրել է Վարկը տրամադրելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ կամ Բանկին չի տեղեկացրել հանգամանքների էական փոփոխությունների մասին, կամ չի ներկայացնում/ներկայացրել Պայմանագրով նախատեսված տեղեկատվությունը (փաստաթղթեր, հաշվետվություններ) կամ խախտել է դրանց ներկայացման ժամկետը, կամ

2.3.1.10. Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը խախտել է Բանկի հետ կնքած այլ գործարքներից ծագած ֆինանսական պարտավորությունները, կամ

2.3.1.11. Ստացված տեղեկատվության համաձայն՝ Վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող աշխատավարձը կամ դրան հավասարեցված այլ վճարները այլևս չեն փոխանցվում կամ չեն փոխանցվելու Բանկում սպասարկվող Վարկառուի բանկային, այդ թվում՝ քարտային հաշվին, կամ

2.3.1.12. Ֆինանսավորման, վերաֆինանսավորման ներկայացված վարկը չի ֆինանսավորվել կամ ֆինանսավորումը դադարեցվել է, կամ

2.3.1.13. Իրավաբանական անձ Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի նկատմամբ որոշում է կայացվել լուծարման կամ վերակազմակերպման կամ կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին, կամ

2.3.1.14. կասեցվել են Իրավաբանական անձ կամ Անհատ ձեռնարկատեր Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի գործառույթները կամ դրանց մի մասը, կամ անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվել նրան տրված լիցենզիան, կամ առկա է նման կասեցման, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հնարավորություն, կամ

2.3.1.15. Բանկի գնահատմամբ Վարկառուն Վարկն օգտագործել է ոչ նպատակային, կամ

2.3.1.16. Վարկառուն խոչընդոտել է Բանկի ներկայացուցիչների կողմից իրականացվող ստուգումներին կամ չի ապահովել Վարկի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության հնարավորությունը, կամ

2.3.1.17. Գրավի առարկայի վերագնահատման արդյունքում նվազած արժեքի չափով Վարկառուն չի կատարել Բանկի համար ընդունելի լրացուցիչ գրավ տրամադրելու կամ համապատասխան չափով Վարկի մայր գումարից մարում կատարելու Բանկի պահանջը, կամ

2.3.1.18. Առկա են Վարկային պայմանագրով և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

2.3.2 Վարկավորման կանոնների 2.3.1 կետում նշված Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի կողմից թույլ տրված խախտումները և հանգամանքների փոփոխությունները Բանկի համար ճանաչվում են էական:

2.3.3 Վարկավորման կանոնների 2.3.1 կետում նշված հանգամանքներն ի հայտ գալու պահից Բանկն իրավունք ունի պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում պահանջել Վարկառուից, մերժել Վարկի տրամադրումը, ինչպես նաև, փոփոխել Վարկի տոկոսադրույքը անկախ նրանից, համապատասխան գործողությունը կատարելու պահին թույլ տրված խախտումները վերացվել են, թե ոչ:

2.3.4 Պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջի ներկայացումը, վարկի տրամադրումը մերժելը կամ տոկոսադրույքի փոփոխությունը Բանկին չի զրկում համապատասխան խախտման համար Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի նկատմամբ Վարկային կամ Ապահովման միջոցի պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոց կիրառելու իրավունքից:

2.3.5 Վարկավորման կանոնների 2.3.1 կետում նշված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում Բանկը, Վարկի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնելու իր իրավունքից օգտվելու դեպքում, գրավոր ծանուցում է Վարկառուին՝ Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման (ներառյալ տոկոսների և տուժանք (տույժերի և տուգանքների վճարումը)) մասին:

Վարկառուն պարտավոր է վաղաժամկետ վճարման պահանջի վերաբերյալ Բանկի ծանուցումն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում առանց որևէ հրաժարումների ամբողջությամբ վաղաժամկետ վերադարձնել տրված, սակայն չվերադարձված Վարկն ամբողջությամբ՝ հասանելիք տոկոսների հետ միասին, և փաստացի վերադարձման օրվա դրությամբ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները և տուժանքը (տույժ ու տուգանքը): Այդ ժամկետում Բանկի վճարման պահանջը Վարկառուի կողմից չկատարվելու դեպքում բոլոր վճարները համարվում են ժամկետանց, իսկ պարտավորությունը՝ խախտված, և Վարկառուն դրանց չկատարման համար պատասխանատվություն է կրում Վարկային պայմանագրով նախատեսված կարգով, պայմաններով ու չափերով:

2.1.7 2.3.6 Եթե Բանկը Վարկառուից պահանջում է պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում, ապա Բանկն անակցեպտ կարգով, առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության, գանձում է պարտքի գումարը Բանկում գտնվող նրա բոլոր բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից: Վարկառուի կողմից Բանկի պահանջներին համապատասխան վաղաժամկետ և ամբողջական վճարում կատարելու դեպքում Վարկային և Ապահովման միջոցի պայմանագրերը դադարում են:

3 Պարտավորությունների կատարման ապահովում

3.3 Երաշխավորություն

3.1.1 Համապատասխան վարկատեսակի պայմաններով երաշխավորությունը որպես ապահովման միջոց նախատեսված դեպքում Բանկի և Երաշխավորի միջև կնքվում է Երաշխավորության պայմանագիր:

3.1.2 Բանկի հետ Երաշխավորության պայմանագիր կնքելու նպատակով Երաշխավորը Բանկին ներկայացնում է առաջարկ-դիմում, որը Բանկի կողմից ընդունվելու (ակցեպտավորվելու) դեպքում Երաշխավորության պայմանագիրը համարվում է կնքված: Սույն կետով սահմանված կարգով կնքված Երաշխավորության պայմանագիրը ներառում է Երաշխավորողի ներկայացրած առաջարկ-դիմումը, սույն կանոնները և համապատասխան վարկատեակի Վարկավորման պայմանները: Սույն կետով սահմանված կարգով կնքված երաշխավորության պայմանագիրը համարվում է Վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Դրամական միջոցների գրավ

3.2.1 Համապատասխան վարկատեսակի պայմաններով դրամական միջոցների գրավը որպես ապահովման միջոց նախատեսված դեպքում Բանկի և Գրավատուի միջև կնքվում է Գրավի պայմանագիր:

3.2.2 Բանկի հետ Գրավի պայմանագիր կնքելու նպատակով Գրավատուն Բանկին ներկայացնում է առաջարկ-դիմում, որը Բանկի կողմից ընդունվելու (ակցեպտավորվելու) դեպքում Գրավի պայմանագիրը համարվում է կնքված: Սույն կետով սահմանված կարգով կնքված Գրավի պայմանագիրը ներառում է Գրավատուի ներկայացրած առաջարկ-դիմումը, սույն կանոնները և համապատասխան վարկատեակի Վարկավորման պայմանները: Սույն կետով սահմանված կարգով կնքված Գրավի պայմանագիրը համարվում է Վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

3.3 Ոսկյա իրերի գրավ

3.3.1 Համապատասխան վարկատեսակի պայմաններով ոսկյա իրերի գրավը՝ որպես ապահովման միջոց նախատեսված դեպքում, Բանկի և Վարկառուի միջև կնքվում է ոսկյա իրերի գրավի և վարկային խառը պայմանագիր (ըստ կիրառելիության նաև Պայմանագիր կամ Վարկային պայմանագիր):

3.3.2 Պայմանագրով Վարկառուի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը, ներառյալ, բայց ոչ միայն Բանկին վճարման ենթակա գումարների, դրանց օգտագործման դիմաց հաշվարկված Տոկոսագումարի և Վարկավորման պայմաններով նախատեսված տուժանքների, դրանց վերադարձման կապակցությամբ Բանկի կողմից կատարված ծախսերի վերադարձելիությունը, ապահովվում է Գրավի առարկայով: Գրավի առարկան գրավադրված է համարվում ոսկյա իրերի գրավի և վարկային խառը պայմանագրի հիմքով:

3.3.3 Բանկի հետ ոսկյա իրերի գրավի և վարկային խառը պայմանագիր կնքելու նպատակով Վարկառուն Բանկին ներկայացնում է առաջարկ-դիմում, որը Բանկի կողմից ընդունվելու (ակցեպտավորվելու) դեպքում համարվում է Բանկի և Վարկառուի միջև կնքված Պայմանագիր: Սույն կետով սահմանված կարգով կնքված Պայմանագիրը ներառում է Վարկառուի ներկայացրած առաջարկ-դիմումը, սույն կանոնները, համապատասխան վարկատեսակի Վարկավորման պայմանները և Մարման ժամանակացույցը:

3.3.4 Գրավի առարկան գնահատվում է՝ որպես դրանում առկա համապատասխան հարգի և քաշի ոսկու ջարդոն: Գրավի առարկայում առկա ոսկերչական աշխատանքները, թանկարժեք քարերը, թանկարժեք այլ մետաղները չեն գնահատվում և Գրավի առարկան Պայմանագրով նախատեսված կարգով բռնագանձելու և իրացնելու դեպքում այն իրացվելու է բացառապես որպես ոսկու ջարդոն:

3.3.5 Բանկն իրավունք ունի վերագնահատել Գրավի առարկան: Ընդ որում, եթե Գրավի առարկայի վերագնահատման արդյունքում պարզվում է, որ վերջինիս արժեքը նվազել է, Բանկն իրավունք ունի Գրավի առարկայի նվազած արժեքի չափով Վարկառուից պահանջելու Բանկի համար ընդունելի լրացուցիչ գրավ և/կամ այդ չափով Վարկի վաղաժամկետ մարում:

3.3.6 Մարման ժամանակացույցով սահմանված կարգով և ժամկետում Պայմանագրով նախատեսված պարտավորության լրիվ կատարումից հետո Բանկն անհապաղ հետ է վերադարձնում գրավադրված արժեքները, իսկ պարտավորությունների վաղաժամկետ կամ մարման ժամանակացույցով սահմանված ժամկետից ուշ մարման դեպքում նույն օրը, բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

3.3.7 Գրավի առարկայի իրացումից ստացված գումարից դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու նպատակով ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարները պահելուց հետո Բանկը բավարարում է Պայմանագրից ծագած իր բոլոր պահանջները, իսկ մնացած գումարը օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոխանցում է Վարկառուին:

Եթե Գրավի առարկան իրացնելուց ստացված գումարները բավարար չեն Բանկի պահանջները բավարարելու համար, ապա Բանկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագանձում տարածել Վարկառուի այլ գույքի վրա:

3.3.8 Գրավի առարկայի իրացման գործընթացի ժամանակահատվածում Պայմանագրով Բանկի նկատմամբ Վարկառուի պարտավորությունները չեն դադարում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Ընդ որում՝ Գրավի առարկայի իրացման գումարի հաշվին ամբողջությամբ մարվում են իրացման օրվա դրությամբ Վարկառուի նկատմամբ Բանկի ունեցած պահանջները:

3.4. Պարտատոմսերի գրավ

3.4.1. Համապատասխան վարկատեսակի պայմաններով պարտատոմսերի գրավը որպես ապահովման միջոց նախատեսված լինելու դեպքում Բանկի և Գրավատուի միջև կնքվում է Գրավի պայմանագիր:

3.4.2. Բանկի հետ Գրավի պայմանագիր կնքելու նպատակով Գրավատուն Բանկին ներկայացնում է առաջարկ-դիմում, որը Բանկի կողմից ընդունվելու (ակցեպտավորվելու) դեպքում Գրավի պայմանագիրը համարվում է կնքված: Սույն կետով սահմանված կարգով կնքված Գրավի պայմանագիրը ներառում է Գրավատուի ներկայացրած առաջարկ-դիմումը, սույն կանոնները և համապատասխան վարկատեակի Վարկավորման պայմանները: Սույն կետով սահմանված կարգով կնքված Գրավի պայմանագիրը համարվում է Վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

4 Պատասխանատվություն

4.1 Վարկառուի կողմից Վարկը և Տոկոսագումարը մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) ժամկետները կամ Վարկային պայմանագրից բխող պարտավորությունները խախտելու դեպքում հաշվարկվում են տոկոսներ և/կամ տուժանքներ՝ Վարկավորման պայմաններով նախատեսված չափով, մինչև ժամկետանց պարտավորության մարումը: Վարկը մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) ժամկետները խախտելու դեպքում Պայմանագրով նախատեսված տարեկան տոկոսադրույքի հաշվարկը Վարկի ժամկետանց գումարների նկատմամբ դադարեցվում է և այդպիսի ժամկետանց գումարների նկատմամբ կիրառվում են Վարկավորման պայմաններով սահմանված տոկոսները:

4.2 Յուրաքանչյուր վարկատեսակով Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կիրառվող տույժերը և տուգանքները սահմանվում են Վարկավորման պայմաններով:

4.3 Վարկառուն պատասխանատվություն է կրում Բանկից թաքցված, Բանկին ներկայացված անարժանահավատ կամ կեղծ կամ շինծու կամ խեղաթյուրված տեղեկությունների համար:

4.4 Տուժանքի (տուգանք և տույժ) և տոկոսների վճարումը Վարկառուին չի ազատում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց, ինչպես նաև չի կարող որևէ կերպ սահմանափակել պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելու Բանկի իրավունքը:

4.5 Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը պատասխանատու են ՀՀ օրենսդրությամբ և Վարկային և Ապահովման միջոցի պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար անկախ մեղքի բացակայությունից և (կամ) անհաղթահարելի ուժի՝ արտակարգ և անկանխելի հանգամանքների ազդեցությունից: Բանկի գրավոր համաձայնությամբ Պայմանագրով սահմանված համապատասխան ժամկետները կարող են երկարաձգվել անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածով, սակայն ցանկացած դեպքում Վարկառուն կարող է ազատվել բացառապես տույժերի և տուգանքների վճարման պարտավորությունից, սակայն ոչ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից:

4.6 Պայմանագրին համապատասխան Բանկին վճարման ենթակա գումարների, ներառյալ, բայց ոչ միայն, տոկոսագումարի, Պայմանագրից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կիրառվող տուժանքների և այլ վճարների, հաշվարկումը և գանձումը իրականացվում է Բանկի բացառիկ հայեցողությամբ և Բանկն իրավունք ունի ինչպես պահանջելու, այնպես էլ հրաժարվելու՝ ամբողջությամբ կամ մասամբ, պարտավորության, այդ թվում կետանցի, ամբողջ ժամանակաշրջանի կամ դրա հատվածի համար հաշվարկման և գանձման ենթակա գումարներից:

4.7 Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Վարկառուն պարտավորվում է Բանկին փոխհատուցել բոլոր տեսակի լրացուցիչ ծախսերը, որոնք կկատարվեն Բանկի կողմից:

4.8 Վարկառուն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն է կրում Գրավի առարկայով, իսկ դրա չբավարարելու դեպքում նաև սեփական գույքով:

4.9 Պայմանագրով և (կամ) Վարկավորման պայմաններով սահմանված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Պայմանագրով և(կամ) Վարկավորման պայմաններով սահմանված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

4.10 Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում Բանկն իրավունք ունի պարտավորությունը ժամկետանց դառնալու պահից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր պահանջի բավարարումն իրականացնել Գրավի առարկայի հաշվին:

5 Հաղորդակցում

5.1 Վարկային և Ապահովման միջոցի պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որը չի ենթադրում Պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության հաղորդում, Բանկի կողմից մյուս կողմին ուղարկվում է Բանկի հայեցողությամբ՝ ցրիչի կամ փոստային առաքման միջոցով, էլետրոնային փոստի միջոցով կամ կարճ հաղորդագրությամբ (SMS)՝ համապատասխան կապի միջոցի ՝ Բանկին հայտնի վերջին տվյալներով, կամ տրամադվում է Բանկի տարածքում:

5.2 ՀՀ օրենսդրությամբ սահմանված Վարկառուին պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը, այդ թվում պարտադիր ներկայացման ենթակա քաղվածքները Վարկառուին տրամադրվում են Վարկային պայմանագրով Վարկառուի կողմից նախընտրած եղանակով՝ համապատասխան կապի միջոցի՝ Բանկին հայտնի վերջին տվյալներով:

5.3 Սույն Կանոնների 5.1 և 5.2 կետերով սահմանված տեղեկատվությունը Վարկառուին և/կամ Ապահովում տրամադրած անձանց տրամադրված է համարվում Բանկի կողմից ուղարկման պահից, բացառությամբ Բանկի տարածքում տրամադրման ենթակա տեղեկատվության: Բանկի տարածքում տրամադրման ենթակա տեղեկատվությունը Վարկառուին և/կամ Ապահովում տրամադրած անձանց տրամադրված են համարվում՝ վերջիններիս համար Բանկի տարածքում փաստացի հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից Վարկառուն և/կամ Ապահովում տրամադրած անձը ներկայացել են Բանկ և փաստացի ստացել են տեղեկատվությունը, թե ոչ: Ընդ որում, ցրիչի միջոցով կամ փոստային առաքման դեպքում՝ պահանջի, ծանուցման կամ այլ հաղորդման ուղարկման օրը որոշվում է Բանկի ելքային ամսաթվով կամ փոստային ծառայություններ մատուցող կազմակերպության դրոշմակնիքով: Բանկի Պայմանագրով նախատեսված ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում համարվում է մյուս կողմի կողմից պատշաճ ստացված (հանձնված) ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, թեկուզև հետագայում պարզվի, որ մյուս կողմը նշված ծանուցումը փաստացի չի ստացել, իսկ նշված յոթօրյա ժամկետում ստանալու դեպքում՝ փաստացի ստանալու օրը:

5.4 Սույն գլխով սահմանված կապի միջոցի՝ Բանկին հայտնի վերջին տվյալներ (այդ թվում՝ բնակության հասցե, էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար) են համարվում Վարկային պայմանագրում՝ Վարկառուի համար, Ապահովման միջոցի պայմանագրում՝ Ապահովում տրամադրած անձի համար նշված կապի միջոցի տվյալները, իսկ սույն կանոնների 5.5-րդ կետով նախատեսված դեպքում կապի միջոցի՝ Բանկին վերջին անգամ գրավոր ծանուցված տվյալները:

5.5 Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը պարտավոր են 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Բանկին, վերջինիս համար ընդունելի կարգով, սույն կանոններին համապատասխան վերջին հայտնի կապի միջոցների տվյալների փոփոխությունների մասին: Փոփոխությունների մասին Բանկին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող կողմը:

6 Եզրափակիչ դրույթներ

6.1 Վարկային և Ապահովման միջոցի պայմանագրերը ուժի մեջ են մտնում կնքման պահից և գործում են մինչև Վարկառուի կողմից Վարկային պայմանագրից բխող պարտավորությունների ամբողջական կատարումը:

6.2 Սույն Կանոնները և Վարկավորման պայմանները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում և կարող են պարբերաբար Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել, փոփոխված Կանոնները և Վարկավորման պայմանները Բանկի հետ մինչև դրանց հրապարակումը պայմանագիր կնքած անձանց համար ուժի մեջ են մտնում Բանկի կայքում դրանց հրապարակման ամսաթվին հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, իսկ այլ անձանց համար՝ հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում: Բանկի փոփոխված Վարկավորման պայմանները հրապարակելիս Բանկը կարող է սահմանել, որ փոփոխությունները գործող հաճախորդների (Վարկառու/Ապահովում տրամադրած անձ) նկատմամբ չեն տարածվում:

6.3 Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել առաջարկ-դիմումներում նշված պայմանները: Պայմանագրում փոփոխություններ և(կամ) լրացումներ կարող են կատարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ Պայմանագրով և (կամ) սույն կանոններով նախատեսված դեպքերի:

6.4 Սույն կանոնների, Վարկավորման պայմանների և առաջարկ-դիմումների պայմանների փոփոխությունների մասին Բանկը ծանուցում է Վարկառուին և (կամ) Ապահովում տրամադրած անձին՝ օրենքով և Վարկային պայմանագրով սահմանված կարգով և դեպքերում համապատասխան փոփոխության վերաբերյալ որոշման կայացումից հետո, սակայն ոչ ուշ, քան որոշումն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ, բացառությամբ վարկային բյուրո տվյալները ուղարկելու դեպքի, այլ դեպքերում՝ կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ոչ ուշ, քան համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց և Բանկի՝ այդ մասին տեղեկանալուց 7 աշխատանքային օր հետո: Բանկը կարող է նաև իր նախաձեռնությամբ հեռախոսային կապի միջոցով կարճ հաղորդագրություն (SMS) կամ էլեկտրոնային փոստով նամակ ուղարկել Վարկառուին և Ապահովում տրամադրած անձանց՝ փոփոխությունների մասին: Վարկառուն իրավունք ունի հրաժարվել նշված փոփոխություններից և լրացումներից մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ լուծելով Բանկի հետ կնքած Վարկային պայմանագիրը և ամբողջությամբ կատարելով ստանձնած պարտավորությունները: Եթե Վարկառուն մինչև փոփոխությունների ու լրացումների ուժի մեջ մտնելը չի լուծել Բանկի հետ կնքած Վարկային պայմանագիրը, ապա կատարված փոփոխություններն ու լրացումները լրիվ և ամբողջական ծավալով տարածվում են Վարկային պայմանագրից ծագած հարաբերությունների նկատմամբ, եթե Բանկի կողմից այլ բան չի սահմանվում:

6.5 Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը թույլատրում են Բանկին՝ սպասարկման պատշաճ ապահովման և անվտանգության նկատառումներից ելնելով, վարելու իրենց միջև կատարվող հեռախոսազանգերի ձայնագրություն: Տվյալ ձայնագրությունները ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

6.6 Սույն կանոնների և դիմում-պայմանագրերի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է սույն կանոններին, եթե կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ այլ բան չի որոշվել:

6.7 Սույն կանոններին համաատասխան կնքվող պայմանագրերից բխող իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը: Նշված պայմանագրերից բխող վեճերը լուծվում եմ դատական կարգով՝ ՀՀ օրենդրությանը համապատասխան, եթե կողմերը փոխադարձ գրավոր համաձայնությամբ այլ բան չեն որոշել: Եթե կողմերը փոխադարձ գրավոր համաձայնությամբ որոշել են վեճերի լուծումը հանձնել արբիտրաժային դատարանի քննությանը, Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը տեղեկացված են, որ արբիտրաժային վարույթի շրջանակներում իրավունք ունեն, այդ թվում՝

Դիմել, որպեսզի արբիտրաժային տրիբունալը իր հաշվին ապահովի Վարկառուին թարգմանչական ծառայություններով, եթե ինքը չի տիրապետում դատավարության լեզվին,

Փոխել հայցի առարկան և/կամ հիմքը, նվազեցնել կամ ավելացնելու հայցային պահանջների չափը մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործի քննությունն ավարտված հայտարարելը,

Բացարկ հայտնել արբիտրին, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են հարուցում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, մասնավորապես, եթե հիմքեր կան ենթադրելու, որ նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված է վարույթի ելքով,

Բացարկներ հայտնել նաև վարույթին մասնակցող փորձագետներին և թարգմանիչներին: Այս դեպքում բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը,

Բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետ 30-օրյա ժամկետում դիմել իրավասու դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով,

Հայցադիմումը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում Արբիտրաժային դատարանին ուղարկել հայցադիմումի պատասխան՝ շարադրելով Բանկի կողմից գործը Արբիտրաժային դատարանին հանձնելու վերաբերյալ և/կամ ներկայացված պահանջների վերաբերյալ իր դիրքորոշումը,

Հայցադիմումի պատասխանի փոխարեն Արբիտրաժային դատարանին ներկայացնել հակընդդեմ հայցադիմում,

Ծանոթանալ գործի քննության արձանագրության բովանդակությանը,

Միջնորդել որ արձանագրության մեջ կատարվեն փոփոխություններ և/կամ լրացումներ,

Ստանալ գործի քննության արձանագրության պատճենը,

Վարել գործերն անմիջականորեն (անձամբ) կամ պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով,

Միջնորդել արբիտրաժային տրիբունալին վերացնելու իր կողմից կիրառված հայցի ապահովման միջոցները,

Միջնորդել արբիտրաժային վարույթին երրորդ անձի ներգրավման համար,

Տեղեկացնելով Բանկին՝ արբիտրաժային վճիռը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին վճռի որևէ կոնկրետ կետ կամ մաս պարզաբանելու համար: Եթե արբիտրաժային

տրիբունալը հիմնավոր է համարում այդպիսի դիմումը, ապա դրա ստացումից հետո երեսուն օրվա ընթացքում տալիս է անհրաժեշտ պարզաբանումներ: Այդ պարզաբանումը դառնում է վճռի բաղկացուցիչ մասը,

Բանկին տեղյակ պահելով՝ արբիտրաժային վճիռը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին կայացնեու լրացուցիչ վճիռ այն պահանջների վերաբերյալ, որոնք պատշաճ կերպով ներկայացվել են արբիտրաժային վարույթում, սակայն վճռում չեն արտացոլվել: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր համարի այդ դիմումը, ապա պարտավոր է այն ստանալուց հետո վաթսունօրյա ժամկետում կայացնել լրացուցիչ վճիռ:

Վարկառունև Ապահովում տրամադրած անձն արբիտրաժային վարույթի շրջանակներում պարտավոր է, այդ թվում՝

Հասցեի փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես հաղորդել Արբիտրաժային դատարանին,

Հայցադիմումին կից ներկայացնել սահմանված կարգով հաշվարկված արբիտրաժային վճարների կատարումը հավաստող փաստաթղթերը,

Հայցադիմումի պատասխանում հանգամանորեն շարադրել, թե փաստական և իրավական հանգմանքներից որոնք է ընդունում և որոնց դեմ է առարկում և ինչ հիմքերով է դրանց դեմ առարկում.

Արբիտրաժային համաձայնության վավերության կամ կիրառելի լինելու վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում շարադրել դրանք Արբիտրաժային դատարանին ուղղված պատասխանի մեջ՝ միաժամանակ նշելով հիմնավորումները,

Հայցադիմումի պատասխանին կից ներկայացնել այն բոլոր ապացույցները, որոնցով հիմնավորում են իր առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,

Եթե Բանկի կողմից ներկայացվում է հակընդդեմ հայցադիմում, ապա հակընդդեմ հայցադիմումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում արբիտրաժային տրիբունալին ներկայացնել հակընդդեմ հայցադիմումի պատասխան, որը պետք է ներառի առարկություններ հակընդդեմ հայցապահանջների դեմ՝ հայցային պահանջների դեմ առարկություններ բերելու համար նախատեսված կարգով: Հակընդդեմ հայցադիմումի պատասխանին կից պետք է ներկայացվեն բոլոր այն ապացույցները, որոնցով հիմնավորվում են առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,

Ապացուցել իր պահանջների կամ առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,

Ներկայացնել գրավոր ապացույցների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,

Արբիտրաժային տրիբունալի վճիռները կատարել կամավոր վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է կատարման անհապաղ:

Եթե վեճը ենթակա է դատական քննության, Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը տալիս են համաձայնություն գործով պարզեցված վարույթ կիրառելու համար: Արբիտրաժային դատարանում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Արբիտրաժային դատարանի կանոնադրությանը և արբիտրաժի կանոնակարգին համապատասխան:

Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը սույնով հավաստում են, որ ծանոթացել են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, արբիտրաժային կանոնակարգերին, դրանցով սահմանված իրենց իրավունքներին և պարտավորություններին, Բանկի կողմից նրանց բացատրվել են սույն կետով նախատեսված վեճերի լուծման տարբերակի ընտրության հետևանքները, որոնց կապակցությամբ Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը առարկություններ չունեն: Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը հրաժարվում են հետագայում սույն կետով նախատեսված փաստերը վիճարկելու իրենց իրավունքից:

Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը սույնով տալիս են համաձայնություն առ այն, որ սույն կետով նախատեսված Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային դատարանի արբիտրաժային կանոնակարգին համապատասխան:

Վարկառուն և Ապահովում տրամադրած անձն ընդունում են, որ Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման:

Վարկառուն և Ապահովում տրամադրած անձն ընդունում են, որ Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում վեճերը լուծվում են ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, Արբիտրաժային դատարանի վայրն է՝ ՀՀ, ք. Երևան:

Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը գիտակցում են, որ Արբիտրաժային դատարանի վճիռը լինելու է վերջնական, ենթակա չի լինելու բողոքարկման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը պարտավորվում են հետագայում չշահարկել և չվիճարկել այդ փաստի վերաբերյալ իրենց տեղեկացվածության հանգամանքը:

Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը հնարավորություն ունեն Պայմանագրից, ինչպես նաև դրա շրջանակներում կնքված պայմանագրերից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով: Վարկառուն և Ապահովում տրամադրած անձը տեղեկացված են, որ Բանկը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր է կնքել որոշակի սահմանափակումներով և չի վիճարկում հաշտարարի որոշումները, եթե գործարքի գումարը չի գերազանցում 500’000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գույքային պահանջի չափը չի գերազանցում 250’000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Նշված չափերը Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի միջև համաձայնագրի կնքմամբ կարող են փոփոխվել:

6.8 Սույն կանոնները չեն կիրառվում քարտերով տրամադրվող վարկային գծերի նկատմամբ: